



## Դ Լ Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Ե Ր

(ԽոնովԱՍՍ Ս. ԷԶՄԻԱՍՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, 1954 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-ԻՆ,  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ  
Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԵՐԶԱՆԿԱԶԻՇԱՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԴԱԳԱՂԻ ԱՌՋԵՎ)

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ

(Գերագույն Հոգևոր Խորհրդի  
հախազանող անդամ)

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ Լ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՆՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԺ ԿՈՐՈՒՍՏԸ

«Եւ սգային ամենայն ազատ և շինական  
ծագէ ի ծագ ամենայն սահմանաց երկրին  
Հայոց... ամենայն բնակիչ տանն Թորգո-  
մայ, Հայոց լեզու առնասարակ»։— Այսպես  
է նկարագրում Փալատոս Բյուզանդացին ազ-  
գային մեծ սուրբ Ներսէս Մեծի մանվան առ-  
թիվ։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին  
և հայ հավատացյալ ժողովուրդը այսօր, ոչ  
պակաս խորունկ, քան Ներսէս Մեծի մահը,  
սգում են մեր օրերի մեծագույն և հայրենա-  
սեր Հայրապետի՝ Նորին Ս. Օծուրյուն Տ. Տ.  
Գեորգ Զ. առաքելաշաղիկ Կաթողիկոսի մահը։  
Սգի մեջ է Հայաստանյայց Առաքելական  
Ս. Եկեղեցին։ Սգի մեջ է և՛ Մայր Հայրենի-  
քի, և՛ Սփյուռքի բովանդակ հավատացյալ  
ժողովուրդը։

Մեզ հետ չէ այլևս ամենից սիրված և  
հարգված վեհափառը։

Մեծ ու խորունկ է Հայաստանյայց Առա-  
քելական Եկեղեցու վիշտը, որովհետև ծանր  
ու անդամաճեղի է հայ ժողովրդի կորուստը։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին  
կորցնում է իր մեծագործ և անձնդիր Մեծ  
Հովհաննիս, հայ ժողովուրդը՝ իր հայրե-  
նասեր և արժանավոր զավակին, իսկ Հայրե-  
նիքը՝ իր մեծ և հավատարիմ քաղաքացուն։

Հանգուցյալ վեհափառ հայ ազգային-  
եկեղեցական պատմության անկրկնելի մե-  
ծություններից մեկն էր։ Նրա անունը անսահ-  
մանորեն բանկ է ո՛չ միայն հայ ժողովրդի  
համար, այլ նաև՝ Բրիտանական Բույր Եկե-  
ղեցիների և խաղաղասեր ողջ ազգերի հա-  
մար։ Եվ այսօր, Հայաստանյայց Առաքելա-  
կան Եկեղեցու վշտի այս ծանր օրերին, հայ  
հավատացյալների ամենածանր սուգն է բա-  
ժանում ողջ Բրիտանական աշխարհն ու  
խաղաղասեր մարդկությունը։

Ահա այս դաժալի մեջ հավիտենական և  
խաղաղ բնով բնել է նա, մեր ժամանակի  
ամենաինքնատիպ եկեղեցականներից մեկը,  
որն իր բարձր կոչման ու պարտականության  
խորը գիտակցությամբ, աննահանջ սիրով  
ժողայել է Հայաստանյայց Առաքելական  
Եկեղեցուն, հայ ժողովրդին, ապրել է և գոր-  
ծել՝ Եկեղեցու և Ազգի համար։

Հանգուցյալ վեհափառ Հայրապետը հայ  
ազգային-եկեղեցական նորագույն պատմու-  
թյան այն բացառիկ դեմքերից մեկն էր, որի  
կյանքն ու բազմաբեղուն գործունեությունը  
սերտորեն կապված են եղել հայ ժողովրդի  
պատմության վերջին հիսնամյակի հետ։ Եվ  
երբեք պատահականություն չէր այն անկա-  
շառ համակրանքն ու բարձր վստահությունը,



երբ 1945 թվականին Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական մեծ ժողովը, միաձայնությամբ, Նրան կոչեց բազմելու Ամենայն Հայոց Հայրապետության պատասխանատու Գահին:

Վեհափառն Իր բարոյական և իմացական հազվագյուտ շնորհներով, իմաստուն ազգային-եկեղեցական փառափառությամբ, Իր հեռատես և փորձված վարչագիտությամբ կարողացավ բարձր պահել Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության գերագան և բարձրագույն հեղինակությունը: Հայրենասեր և եկեղեցասեր Հայրապետի արժվատես նշանակության չի վրիպել երբեք Իր հոտին և Հայրենիքին վերաբերող ո՛չ մի իրադարձություն և գործ:

Նրա հայրապետության տարիներին, հայ ժողովրդի սիրտը անվերապահորեն, ավելի քան երբեք, կապված է եղել Իր Հայրապետական Աթոռի և ճրագ Գահակալի հետ: Ս. Էջմիածինը եղել է և է հայ ժողովրդի Սրբություն Սրբոցը, հայ ազգային-եկեղեցական միասնության դարավոր շաղկապ և խորհրդանշանը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Գեորգ Զ.ի հայրապետության օրով, և՛ Մայր Հայրենիքում, և՛ Սփյուռքում, ապրել է հոգևոր զարթոնքի մի նոր ու խոստումնալից շրջան: Այսօր, ավելի քան երբեք, լուսալայծառ փողովողում է և՛ հայոց երկնքում, և՛ Մայր Աթոռում Լուսավորչի անմար կանթերը: «Ս. Էջմիածինը աստվածային պարզ և մեզ համար,— պատգամել է մեր սիրելի Հայրապետը,— դարերի պատմությամբ սրբագործված և խոր արմատներ ձգած հայ ժողովրդի կյանքում: Ջլատել Ս. Էջմիածնի բարոյական ուժն ու հեղինակությունը, ստեղծություն փառազել ճրագ դեմ և ժողովրդին մոլորեցնել՝ երեսխայական անմտություն է և ազգավնաս գործողություն»:

Դժվարին ու պատասխանատու է եղել Վեհափառի անցած գործունեության ուղին: Նրա կյանքի և գործունեության բոլոր հանգրվանները, աշխատանքի բոլոր բնագավառներում, եղել են արդյունավետ, հագեցված հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գիտակից և շնորհակալ ծառայության ոգով:

Վարսուն երկար տարիներ, Նա խոսել է, մխիթարել, կրթել ու խանդավառել սերունդներ Հայրենիքի սիրով և Հայ Եկեղեցու գաղափարով:

Ո՛ր էլ որ գնաց՝ իբր հովիվ, առաջնորդ, ուսուցիչ, պարտականության ձայնն ու կոչումի գիտակցությունը ո՛ր էլ որ տարան Նրան, Նա Իր հետ առաքել միշտ Եկեղեցու և Հայրենիքի սերը. «Բրիստոնեությունը ո՛չ

միայն ընդունում է հայրենասիրության գաղափարը, այլև շատ բարձր է գնահատում սերը դեպի Հայրենիք»,— գրել է Նա: Եվ Նա ավագ սերնդի այն բախտավոր եկեղեցականներից մեկն էր, որ Իր աշխատեսալ Իր սիրատուն Հայրենիքի ծաղկումն ու բարգավաճումը:

Վեհափառի ապրած բովանդակ կյանքը մեծ ու պայծառ փառք է եղել Իր դավանած ու պաշտած գաղափարներին, հայրենասիրության, ժողովրդասիրության, ազգային-եկեղեցական միասնության, Նրա հավատի, համոզմունքների, տեսիլքների լուսավոր առաքելությունը:

Հոգեկան մեծ հանույթ էր լսել Նրան: Նա Իր ծրագրերի ու անելիքների մասին խոսում էր երիտասարդի խանդավառությամբ, մեծ տեսաբանի հափշտակությամբ և համոզմունքով: Նա Իր խոսքի մեջ դնում էր ո՛չ միայն Իր բազմակողմանի զարգացումը, գիտությունը, փորձառությունը, հայ ազգային-եկեղեցական կյանքի խորը նախաշուրջ, այլ նաև Իր անսպառ եռանդը, Իր ազնվական և սուրբ հոգին: Օծություն, շուրջ ու շնորհիվ էր կարում Նրա ազնվանդի անձնավորությունից: Վեհություն կար Նրա ամեն մի խոսքի և շարժումի մեջ:

Վեհափառի սրբատառ կոնդակները, հովվական քոթերը քանկազին մարգարիտներ են հայ եկեղեցական մատենագրության մեջ: Նրանք իրենց բրիստոնեական շնչով, հայեցի մտայնությամբ և հարազատությամբ, լեզվական բարձր մշակույթով, ձևի և բովանդակության հարազատությամբ և կատարելությամբ, նոր էջ են բաց անում հայ եկեղեցական նորագույն գրականության մեջ: Գրված յուրաքանչյուր տողի և բառի մեջ Վեհափառը դրել է Իր մեծ, մարդասեր սիրտը, Իր հոգու փաղցրությունն ու օծությունը, հավատի կրակը, Իր մտքի սրտագրավ պարզությունն ու խորությունը:

Դժվար է մեծագործ ու հայրենասեր Հայրապետի հայրենանվեր ու եկեղեցաշեն գործունեությունը խտացնել դամբանականի այս մի քանի սզակից տողերի մեջ:

Ահա քե ինչո՛ւ հայ երախտագետ հավատացյալները խորունկ վշտով խոհարհվել են իրենց սիրելի Հովվապետի նվիրական անշունչի և սուրբ հիշատակի առաջ: Այսօր այս դագաղի շուրջն է հավաքվել բազմահազար հայություն իր վերջին, սրտառու հարգանք մատուցելու Իր մեծ ու հավատավոր գավալին, որն Իր ողջ կյանքը, բոլոր ուժերն ու ընդունակություններն նվիրաբերել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և հայ ժողովրդի ծառայության վսեմ ու շնորհակալ գործին:



Ուխտե՛նք մեր հայրենասեր Հայրապետի այս նվիրական դագաղի առաջ՝ վառ պահել Լուսավորչի կանթեղը Մայր Աթոռում և հայ ժողովրդի հոգում:

Ուխտե՛նք հավատարիմ մնալ հանգուցյալ վեհափառի դավանած ու պաշտած Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միություն և հայ ժողովրդի միասնականության գաղափարներին, գաղափարներ՝ որոնք մեզ ավանդ են մնացել մեր սրբազան նախնիներից՝ Լուսավորչից սկսած մինչև Գեորգ Զ., գաղափարներ՝ որոնցով ապրել, ստեղծագործել ու այսօրվա պայծառ օրվան են հասել Հայ եկեղեցին ու հայ ժողովուրդը:

Ուխտե՛նք սիրել ու ծառայել մեր ծաղկող Հայրենիքին այնպես, ինչպես սիրում և ծառայում էր Նա՝ միշտ հիշելով վեհափառի պատգամը, որ «ՀԱՅՐ, ԲԱՅԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ, ՉՈՒՆԻ ԱՅԻ ՀԱՅՐԵՆԻՔ: ՀԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ ԴՈՒՐՄ ՉՈՒՆԻ ԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿՈՎԱՆ, ԲԱՅՅ ԵԹԵ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՐԱՆ ԳԼԽԱՎՈՐՈՂ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ Ս. ԷՋՄԻԱՍՏԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՎ»:

Համագգային վշտի, սգի օրեր են մեզ համար: Բայց վիշտը զգուցանում է մարդկանց, համախմբում և ամրապնդում: Վշտի, տառապանքի մեջ, միշտ էլ Հայաստանյայց Առա-

քելական եկեղեցին և հայ ժողովուրդը նոր ուժ և փառք ունեն գտել ավելի՛ համախմբվելու, ավելի՛ կազմակերպվելու: Այս սրբազան պահին, մեր մեծ վիշտը աշխատե՛նք վերածել խմբավորության մեծ ուժի՝ մեր նվիրական Մայր Հայրենիքի և պատմական ու դարավոր այս Ս. Աթոռի շուրջ:

Հանգուցյալ վեհափառի հիշատակը նվիրական է մեզ բոլորիս համար: Մենք խորապես ու արժանավոր կերպով հարգած կլինենք Նրա հիշատակը, երբ անվերայ կենսագործենք Նրա ազգային-եկեղեցական միասնությունը, հայրենասիրությունը, եկեղեցասիրությունը, խաղաղասիրությունը, կրոնների և ժողովուրդների միջև համերաշխության և համագործակցության վսեմ պատգամները:

Մեզանից հետագալ մեր սիրելի Հայրն ու պատվական Հայրապետը, ավանդ բողնելով մեզ բոլորիս՝ շարունակել իր գործը:

Աշխատե՛նք պատվով և սրբությամբ կատարել Նրա սրբազան ավանդը:

Ամենախոր և ամենահարգալից զգացմունքներով, մի անգամ ևս, ազգովին, խնամարկում ենք վեհափառի սուրբ հիշատակի և դագաղի առջև:

ԽՈՒՆԿ ՈՒ ԱՂՈՐԹ Ք ՀԻՇԱՍՏԱԿԻԿ, ՄԵՄԱ-ԳՈՐԾ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՎԵՀԱՓԱՌ:

## ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՀՅԱՆ

(Կաթողիկոսական տեղապահ  
Մեծի Տանն Կիլիկիո)

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ ՍՈՒԳՐ

«Միշտ անշարժ պահեա՛, զԱրքու Հայկազ-հան»:

Պատմության ընթացքին ո՛չ մեկ ատեն մեր սրտի խորեն այնքան հավատով լի պիտի մատուցեի՜նք այս մաղթանքը, որքան հիմա:

Անհուն է կորուստը, որուն առջև կգտնվինք ազգովին: Այդ կորուստը կարելի չէ բացատրել բառերով: Նորին Ս. Օծություն Գեորգ Զ. Կաթողիկոսը Հայաստանյայց եկեղեցվո մեծագույն հայրապետներեն մին հանդիսացավ: Ներկա պայմաններու բերումով, հայ եկեղեցականության մեջ, ո՛չ մեկը իր տեղը պիտի կարենար կատարել այն մեծ գործը, ինչ որ ինքն ճշմարտապես ըրավ:

Կիլիկիո Աթոռի մեր պատգամավորներուն հետ փութացինք գալ Մայր Աթոռ՝ մեր միաբանության և մեր սիրեցյալ հոտի անվերա-

պահ սերն ու հարգանքը մատուցելու բազմավաստակ Հանգուցյալի հիշատակին:

Սգավոր էր արդեն մեր հոգին, որովհետև երջանկահիշատակ ու բազմաշնորհ մեր Հայրապետին՝ Գարեգին Ա. Կաթողիկոսի վախճանումով, թափուր կմեար Աթոռը Մեծի Տանն Կիլիկիո: Կրկնապես և անմխիթարորեն սգավոր ենք հիմա, մենք և ամբողջ հայ ժողովուրդը Հայրենիքի և Սփյուռքի, որովհետև թափուր կմեա Ամենայն Հայոց Հայրապետության Այրարատյան նախամեծար Մայր Աթոռը:

Բայց ինչ որ ավելի կխորացնե մեր կսկիծը, այն գիտակցությունն է, թե Հայաստանյայց եկեղեցին և հայ ժողովուրդը կկորսնցնեն ո՛չ միայն արժանընտիր մեկ Գահակալ Լուսավորիչ Հոր Աթոռին, այլ բացառիկ շնորհներով օժտված անձնավորություն մը, որ հայտնվեցավ պատմական ճգնաժամային շրջանի մը և իր մտքին ու